ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ձևավորումը Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակի դասավանդման ընթացքում
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Աիդա Ժորայի Օրդյան Մանկավարժ Հայոց լեզու և գրականություն 5-12-րդ դասարաններ

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրինության) • Web կայքի հասցե	• Կոտայքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոց • Կենտրոնական խճուղի, շենք 33, գյուղ Ակունք, Կոտայքի մարզ, Հայաստան, 2209 • Էլ. հասցե՝ akunqschool@mail.ru • Web կայքի հասցե՝ https://akunqk.schoolsite.am/

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Գլուխ 1.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

§1.Ինքնաճանաչողության զարգացման մեթոդաբանությունը …..... 8

§2.Ինքնաճանաչողությունն ու ստեղծագործականությունը՝ որպես Բլում-Անդերսոնի տաքսոնոմիայի բարձր աստիճան 9

Գլուխ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

§3. Սովորողների ստեղծագործական մտածողությունը և ինքնուրույն գործունեությունը զարգացնող մեթոդների ու հնարների կիրառումը «Սպանված աղավնին» վիպակի դասավանդման գործընթացում՝ ավագ դպրոցում

3.1.Հետազոտության շարժառիթը, մեթոդը և թիրախային խումբը 12

3.2.Հետազոտության ընթացքը 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

Հավելվածներ 21

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հետազոտական աշխատանքիս նպատակն է՝ ավագ դպրոցի սովորողներին լավագույնս նախապատրաստել՝ լինելու 21-րդ դարի գիտակից ու արժանավայել քաղաքացիներ, ինչպես նաև օժանդակել նրանց՝ անձնական կյանքի ճանապարհին լինելու տեղեկացված և ունակ՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու: Ըստ իս՝ դպրոցի և մանկավարժներիցս յուրաքանչյուրի գործունեության նպատակը պետք է լինի, բացի առարկայական ուսումնասիրություններից, երեխային հետագա կյանքին նախապատրաստելը. քանի անգամ ենք լսել, ինչու չէ՝ նաև հեղինակել՝ «Եթե իմանայի…», «Երեխա էի, ինչ էի հասկանում…», արտահայտություններով սկսվող պատմություններ, որոնք բացահայտում են ինքնագիտակցական զարգացման պակաս, անբավարար տեղեկացվածություն, սոցիալական անպաշտպանության դրվագներ: Հայ գրականության դպրոցական դասընթացում քիչ չեն վերոհիշյալ հարցերի քննարկման համար նպաստավոր թեմաները, սակայն ես նախընտրեցի Նար-Դոսի կենսահայեցողության դիրքերից դիտարկել սովորողների ինքնաճանաչողության զարգացման մեթոդները: Նար-Դոսի ռեալիստական էջերը սառը ցնցուղի ներգործություն են ունենում պատանիների ներաշխարհի վրա. «Սպանված աղավնին» վիպակը նրանց առջև ծառանում է միանգամից մի քանի՝ ոչ միայն աննախադեպ, այլև լրջագույն

	հարցադրումներով. • սիրո ազատություն • չմիջնորդավորված հարաբերություններ • արտաամուսնական կապից հղիություն, երեխայի ծնունդ, հետագա սահմռկեցուցիչ վարքագիծ • հանձին Ռուբեն Թուսյանի՝ արտասովոր, անկանխատեսելի ու անպատասխանատու մարդու վերաբերյալ կարծիք կազմել և այլն: • կնոջ պաշտպանվածություն և ազատություն՝ նախկինում, ներկայում, ապա՝ ցանկալի ապագայում: Ուսուցչի վարպետությունից է կախված՝ կկարողանա արդյոք կիրառել սովորողների ինքնավերլուծական մտածողությունը զարգացնող մեթոդներ՝ տալով ուղղորդված առաջադրանքներ, ապա օգնել եզրակացություններ կատարել, ուստի և պատրաստ լինել վճռական ու գիտակցված որոշումներ կայացնելու: Այդ նպատակով հետազոտական հարցը ձևակերպվել է այսպես՝ ➢ Ի՞նչ մեթոդներ ու հնարներ օգտագործել՝ գիտակից, համակարգային և ինտեգրված մտածողության կրող քաղաքացու, անհատի ձևավորման գործում լավագույն վերջնարդյունքների համար:

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Հետազոտությանս թեմայի կարևորությունն ու նշանակությունը համարում եմ սոցիալական և ինքնաճանաչողական կարողունակության ձևավորմանն ուղղված անհատական և թիմային աշխատանքների արդյունքը՝ գիտակից և պատասխանատու վարքագծի առկայությունը պատանիների հետագա կյանքում: Կարևորում եմ ԿՁՈՒ դասերի պլանավորման տարրերից երկուսը՝ ➢ **Հետևողականությունը.** արդյո՞ք աշակերտները կկարողանան ինքնուրույն դիրքորոշում ցուցաբերել մեկ այլ իրավիճակում /«Հին աստվածներ», «Նահանջը առանց երգի»/: ➢ **Ինքնավերլուծությունը.** արդյո՞ք աշակերտը կարող է ինքուրույն եզրակացություն կատարել սեփական կենսափորձի շուրջ, լինել անաչառ ու ազնիվ և նույնը պահանջել շրջապատից:
Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• Լեզվական գրագիտություն և կարողունակություն • Սովորել սովորելու կարողունակություն • Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Հիմնախնդրին անդրադարձ է կատարվել հանրակրթական ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման հետևյալ թեմաների շրջանակում. ➢ «Առարկայի դասավանդման մեթոդիկա» բաժնի **«Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը»** ([4], էջ 17),

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	**Գլուխ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ** Նար-Դոսը հայ գրականության ռեալիստական էջերի ամենավառ լուսատուներից մեկն է։ Գրողի ռեալիստական հարցադրումներնը, հակադրվելով նատուրալիզմի կամ ռոմանտիզմի սքողված պատկերացումներին,ստիպում են ընթերցողին՝ փնտրել և ընտրել սեփական ուրույն դիրքորոշում, և սա հիանալի է։ Նրա երկերի հերոսներն, ի տարբերություն սովորողներին ներկայացված այլ գործող անձանցից, քաղաքաբնակ հայ մարդիկ են, ինչը նոր տեսանկյուն է թելադրում. նահապետական բարքերի դիրքերն ավելի թույլ են, ձևավորվում են միջանձնային հարաբերությունների նոր տարբերակներ, որտեղ ստեղծագործական մտածողությունը մղում է յուրօրինակ մտքերի համախմբման ու նոր գաղափարների գեներացման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների լուծման և դժվարությունների հաղթահարման համար նոր, ռացիոնալ մոտեցումներ։ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության զարգացման արդյունքում ձևավորվող մտածողության մեթոդաբանության բաղադրատարրեր են՝

- խնդրի հստակ ընկալումը
- խնդրահարույց իրավիճակի լուծման ուղիների որոնումը
- տարբեր տեսակետների ընկալումն ու կշռադատումը
- Սեփական արժեհամակարգից բխող արդյունավետ ու յուրօրինակ լուծումների առաջարկումը :

§2. Ինքնաճանաչողությունն ու ստեղծագործականությունը՝ որպես Բլում-Անդերսոնի տաքսոնոմիայի բարձր աստիճան

Տաքսոնոմիաները նպատակ ունեն զանազանելու ուսուցման տարբեր մակարդակներն ու ուսուցիչներին և ուսումնական ծրագրեր մշակողներին օգնել ուսուցումն ավելի բազմազան դարձնելու և սովորողների մոտ տարբեր մակարդակի հմտություններ ու կարողություններ զարգացնելու հարցերում:

Բլումի տաքսոնոմիան (աստիճանակարգումը) մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների հիերարխիկ դասակարգումն է: Այն հիմնականում ներկայացվում է բուրգի տեսքով, քանի որ յուրաքանչյուր մակարդակ կախված է նախորդ մակարդակի ձեռքբերումից: Բլումի տաքսոնոմիան լայնորեն կիրառվում է

հետևյալ աշխատանքների կազմակերպման և ուսումնական նպատակների ապահովման համար՝

- Գնահատման իրականացում,
- Դասընթացների պլանավորում,
- Դասի բարդության գնահատում,
- Թեստերի/հանձնարարությունների բարդության գնահատում,
- Չափորոշիչների կիրառման ուղեցույցների մշակում,
- Առցանց դասընթացների մշակում,
- Սեփական ունակությունների գնահատում,
- Երեխաների՝ չափորոշիչներով նկարագրված ուսումնառական վերջնարդյունքների ապահովում,
- և այլն:

Այն օգնում է ուսուցիչներին սովորեցնելու, իսկ աշակերտներին՝ սովորելու գործընթացում : Այս տաքսոնոմիան ստեղծվել է Բենջամին Բլումի կողմից 1956թ-ին՝ որպես ուսումնառության վերջանդյունքների և նպատակների դասակարգման ձև: 20-րդ դարի կեսերին ձևակերպված այս աստիճանակարգումը նպատակ ուներ սահմանելու կրթության բազմազան նպատակները՝ նշելով, որ ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն **գիտելիքը,** այլև՝ **ըմբռնումը, կիրառումը,**

վերլուծությունը, համադրումը և արժևորումը: 2001թ.-ին Բլումի աշակերտ Անդերսոնը մասնակի փոփոխություն կատարեց աստիճանակարգման նախնական տարբերակում՝ այն դարձնելով ավելի տրամաբանված: Մասնավորապես, Անդերսոնը նկատեց, որ Բլումի տաքսոնոմիայում բոլոր աստիճանները գործողություններ են՝ բացի գիտելիքից: Նա **«գիտելիքը»** փոխարինեց **«հիշել»** բայով: Իսկ **«համադրության»** փոխարեն առաջարկեց **«ստեղծել»** շատ կարևոր նպատակը ([2], էջ 54-55):

«Սպանված աղավնին» վիպակում Ռուբեն Թուսյանի, Սառայի և մյուս գործող անձանց մտածելակերպերի ընկալման, սյուժետային զարգացումներին սեփական գնահատական տալու համար սովորողները պետք է կարողանան համադրել փաստերը, ստեղծել հակակշիռ հանդիսացող փաստարկներ և հիմնավորել իրենց դիրքորոշումները, ստեղծել դժվար իրավիճակում նոր, ճիշտ վարքագիծ դրսևորելու մեխանիզմ՝ հիմնված ինքնուրույն մտածողության վրա:

Սովորողը պետք է կարողանա ցուցաբերել ամբողջական գիտելիք՝ կիրառելով անցածը, գնահատել և ստեղծել նորը, որը կարող է լինել և՛ շոշափելի, և՛ սեփական, ուստի՝ աննախադեպ:

Գլուխ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

§3.Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորումը Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակի դասավանդման ընթացքում

3. 1. Հետազոտության շարժառիթը, մեթոդը և թիրախային խումբը

2021 թ. փետրվարի 10-ից ուժի մեջ է մտել Հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից:

Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի՝ **կարողունակությունները** (կոմպետենցիաները) սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են, որոնք ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և

բխում են հանրակրթության հիմնական նպատակներից ([3]):

Կարողունակությունների վրա հիմնված կրթության առանձնահատկություններից մեկն այն է, որ կարևորվում են ոչ թե առանձին կոնկրետ առարկայական որակները, այլ դրանց և վերառարկայական որակների որոշակի համախումբը: Առարկաները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար, և դրանցից (կոմպետենցիաներից) յուրաքանչյուրը ձևավորվում է մի քանի առարկաների ուսումնասիրության արդյունքում: Այսինքն՝ վերջնարդյունքը ոչ թե տվյալ առարկայի հաջող յուրացումն է, այլ կոմպետենցիաների ձևավորումը:

Ինքնաճաչողական և սոցիալական կարողականության **զարգացումը** կարևոր դեր ու նշանակություն ունի յուրաքանչյուր առարկայի ուսուցման գործընթացում:

Իսկ ինչպիսի՞ առաջադրանքների և մեթոդական հնարների կիրառմամբ է կարելի զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը, խթանել նրանց ինքնուրույն գործունեությունը:

Հետազոտական աշխատանքս ուղղված է վերը նշված հարցերի պատասխանները

գտնելուն և ձեռք բերված արդյունքները հանրայնացնելուն: Աշխատանքն իրականացրել եմ **դիտարկումների մեթոդով** և որպես թիրախային խումբ ընտրել եմ 11-րդ դասարաններում սովորողներին:

3. 2. Հետազոտության ընթացքը

Նախորդ տարիներին 11-րդ դասարանում դասավանդելու իմ փորձից եզրակացրել եմ, որ ուսուցման գործընթացում այդ տարիքային խմբի սովորողների մոտ ստեղծագործական մտածողությունը կարելի է զարգացնել՝ նրանց տալով այնպիսի հանձնարարություններ, որոնց դեպքում հենց **իրենք են դատում, հորինում, ստեղծում նոր լուծումներ** :

Դա կարող է լինել իրավիճակային քննարկում, բանավեճ, գրական դատ և այլն: Շատ արդյունավետ է նաև «Անկյուններ» մեթոդը. սովորողները նախապես բաժանվում են երկու խմբի՝ ըստ հարցադրման: Օրինակ՝ Սառայի վարքագիծը բնականոն է, թե ոչ: Առաջին դասակարգումը խմբերում կատարվում է ըստ պարզունակ՝Այո կամ Ոչ պատասխանների: Այնուհետև ավելի խոր պարզաբանում է կատարվում. այոն կամ ոչը միանշանակ են, թե կա վերապահում՝« այո, բայց…» կամ «ոչ, միայն թե…»: Եթե կարիք կա, վերաբաժանում է

	կատարվում համապատասխանաբար երեք կամ չորս խմբերի: Խմբերում կատարվում է դիրքորոշման ձևակերպում 2-3 րոպե տևողությամբ, որին հաջորդում է բանավեճը միջխմբային կտրվածքով: Այս մեթոդն արդյունավետ է թեմայի ուսումնասիրման 2-րդ դասաժամին, երբ դիպաշարը յուրացված է, և վիպակն ամբողջությամբ չընթերցած սովորողները լրացրել են բաց թողածը: Հաջորդ դասի համար հանձնարարվում է վերընթերցել Հովհաննես Թումանյանի «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքը և ընթերցել Հակոբ Մնձուրու «Փշատիին ծաղիկը» պատմվածքը: • Համադրում ենք երեք ստեղծագործությունները՝ ուշադրություն դարձնելով Սառայի, Ռուբենի, Նեսոյի և Նարոյի կյանքում ընտանեկան հանգամանքների առանձնահատկություններին: Դրանք կարելի է մատուցել կարճ դասախոսությամբ, սակայն, եթե դասարանն ունի բավարար ներուժ, ցանկալի է պարզապես ուղղորդել, որ սովորողները փաստերի համադրմամբ հասնեն սեփական դիրքորոշման, որն այլևս չի մոռացվի: Իսկ փաստերը հետևյալն են. • Ինչպես Նեսոն, Թումանյանի իսկ խոսքերով, կրթություն ստանալու դեպքում շատ լավ մասնագետ՝ գրող կամ աստունքող կդառնար, այդպես էլ Սառան, ընտանեկան առողջ մթնոլորտում իր ընթերցասիրությամբ

կիասներ մասնագիտական աճի՝ ի տարբերություն ստիպողական մենությունն անտառում անցկացնելուն և դրա հետևանքներին:

- Եթե Սառան ունենար հարազատ, սիրող, խորհրդատու մայր, ինչպիսին Նարոյի մայրն էր՝ իր անողոք խստապահանջությամբ, գուցե Սառան սեփական վրիպումներին ավելի բնականոն ընթացք տար. համենայն դեպս՝ մանկասպանության դժոխային արաքը կկանխվեր:
- Ռուբեն Թուսյանին արդեն քանի-քանի սերունդ որակում է ծեծված «ցինիկ» որակումով: Իսկ ուշադրություն դարձվել է արդյոք ցինիզմ ծնող հանգամանքներին, օրինակ՝ վաշխառու հոր արարքներից ամաչող որդու ապրումներին: Չէ որ Ռուբեն Թուսյանը այն աստիճանի դեմ է հոր անազնիվ գործարքներին, որ անանուն կերպով բացահայտում է նրա ստորությունները և ,պարադոքս է, այս հողի վրա ծնված ցինիզմով հայտարարում է՝ թող գտնի հոդված գրողին, թե կարող է…

  Գուցե ցինիզմը, կրկնում եմ, ծնվել է այս անօգնական , ամոթալի վիճակից, երբ ամաչում ես ծնողիդ համար:

➢ **<u>Առաջադրանքի գնահատման չափանիշների սահմանում</u>**

Աշակերտների դիտարկումների, մեկնաբանությունների և բերված

	հիմնավորումների հիման վրա կատարում ենք գնահատում . լավագույն արդյունք՝ սովորողը ցուցաբերել է նյութի ամբողջական ըմբռնում և առաջարկել նորարարական, բոլորի համար ընդունելի լուծման տարբերակ: հաջորդաբար՝ տիրապետում է թեմային, հարցադրումներին, կարողանում է տալ սեփական լուծումներ Տալիս է ինքնուրույն, բայց վիճելի կամ ոչ բոլորի համար ընդունելի որոշումներ: Հետազոտության համար ընտրված առաջադրանքների տեսակները կարող են դրական ազդեցություն ունենալ և լինել արդյունավետ՝ սովորողների ինքնաճանաչողության, ինքնուրույն մտածողության զարգացման համար: Դասերի ժամանակ կիրառված փոխներգործուն մեթոդները կնպաստեն սովորողների ակտիվ, ինքնուրույն և ստեղծագործական մտածողության զարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը:

Օգտագործված մեթոդները	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ Ըստ իմ հետազոտության նպատակահարմարության՝ որպես հետազոտական մեթոդ ընտրել եմ **խմբային աշխատանքը և քարտային աշխատանքը, որտեղ իշխող հարցադրումն է՝ ինչ կտավորեցնեմ կամ ինչ խորհուրդներ կտամ կրտսեր եղբորս կամ քրոջս՝ օգնելով նրան զերծ մնալ ճակատագրական սխալներից:** Կիրառվել է **ոչ ձևայնացված դիտարկում** (որակական դիտարկման ձև է), որի ժամանակ ստեղծվել է համապատասխան իրավիճակ, Հետազոտության ընթացքում սովորողներին հնարավորություն է ընձեռվում կարծիք հայտնել ընտրված առաջադրանքների, հանձնարա-րականների և կատարած աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի մասին: Նրանց կարծիքների և իմ դիտարկումների արդյունքների հիման վրա կատարվել են համապատասխան հետևություններ և եզրահանգում:
Իրականացման ժամանակահատվածը	09.09-07.10.2022թ.

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	11-րդ դասարան, ընտանիքի անդամներ, մտերիմ անձինք:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Այս հետազոտության արդյունքում կատարեցինք մի շարք հետևություններ և եզրահանգումներ, որոնք ներկայացնում եմ ստորև. ➢ Ավագ դպրոցում հայ գրականության դասավանդման գործընթացում իրավիճակային քննարկումները, դերայի խաղերն ու խմբային աշխատանքները դրականորեն են նպաստում սովորողների **սոցիալական և ինքնաճանաչողական մտածողության ու դատողություններ կատարելու կարողության զարգացմանը:** ➢ Նմանատիպ առաջադրանքները նպաստում են նաև սովորողների **լեզվական գրագիտության և կարողունակության զարգացմանը,** քանի որ երեխաներն

	աշխատում են տեքստի հետ, և նրանց մշտապես տրվում է հետադարձ կապ՝ շտկվում են բոլոր տեսակի թերությունները: ➢ Փոխներգործուն մեթոդների կիրառումը խթանում է սովորողների ակտիվ մասնակցությունը և ինքնուրույն գործունեությունը հմտությունների զարգացմանը, ինչն իր հերթին նպաստում է **սոցիալական և ինքնաճանաչողական կարողունակության զարգացմանը:**
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, - Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020 https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
2. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան 2021 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
3. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչ և օրինակելի ծրագիր (ՀՀ ԿԳՄՍ նախարարի N367-Ա/2 հրաման, 04.03.2022 թ.)
4. Հայ գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Անտարես, Երևան, 2006:
5. Մասնակցային կրթություն և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, Կրթական քաղաքացիական նախաձեռնություն, «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ, Երևան 2017 https://lib.armedu.am/files/resource/files/2022-06-24/5d8195dc7c7056844d3df55aa8e58469.pdf
6. Benjamin S. Bloom. Taxonomy of Educational Objectives: Handbook 1: Cognitive domian, New York, 1956, -206
7. Ի՞նչ է Բլումի տաքսոնոմիան՝ https://www.imdproc.am/info/usucichnerin/blooms-taxonomy
8. Հ. Թումանյան «Իմ ընկեր Նեսոն»
9. Հակոբ Մնձուրի «Փշատիին ծաղիկը»

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքները	